«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Արփինե Փիրուզյան

Ուսումնական հաստատություն՝ Հաղպատի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանք 2
Ներածություն 3
Բարոյական արժեքներ 4
Ինչի՞ մասին ես ուզում սովորել 4
Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը 6
Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին 8
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 17

Հետազոտական աշխատանք

Թեմա- Բարոյական արժեքներ:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ի՞նչ են բարոյական արժեքները և որքանո՞վ են կարևոր:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Երեխաները աջից ու ձախից անընդհատ «ռմբակոծվում են» ճշտի ու սխալի վերաբերյալ աղավաղված տեսակետներով, լինի դա իրենց դասընկերների շրջապատում, իրենց լսած երաժշտության, դիտած ֆիլմերի կամ հեռուստահաղորդումների միջոցով: Այդ ամենի ազդեցության ներքո նրանք գուցե սկսեն հարցականի տակ դնել ճշտի ու սխալի վերաբերյալ իրենց ունեցած համոզմունքները: Սա հատկապես լուրջ խնդիր է դեռահասության տարիքում:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Բարոյական արժեքներ ունեցող մարդիկ հստակ հասկանում են՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ: Նրանց վարվելակերպը պայմանավորված չէ պահի թելադրանքով, այլ հիմնված է հստակ սկզբունքների վրա, որոնք նրանց համար հանդիսանում են հուսալի ուղեցույց, և որոնց համաձայն նրանք վարվում են, անգամ երբ իրենց ոչ ոք չի տեսնում:

Խաչվող հասկացությունները՝

- Ժամանակ և տարածություն
- Հայրենասիրական և բարոյական համակարգ
- Ազատ և արդար միտք

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Պատմություն
2. Հասարակագիտություն
3. Հայ գրականություն

Ներածություն

Հետազոտության կարևորությունը: Այսօր ողջ աշխարհում ձևավորվել է իրավիճակ, որը բնութագրվում է սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում արմատական փոփոխություններով: Գիտատեխնիկական հեղափոխությունը կարող է հանգեցնել սոցիալական լուրջ հետևանքների, եթե չուղեկցվի համապատասխան բարոյական զարգացմամբ. հասարակության մեջ ակներև են դառնում բարոյական ավանդական նորմերի անկումը, մարդկանց սպառողական հոգեբանությունը, կողմնորոշումը դեպի կեղծ մշակութային արժեքները, որը արդյունք է զանգվածային անկախ լրատվամիջոցների ակտիվ գործունեության:

Ձևավորված սոցիալ-մշակութային պայմաններում դպրոցն է զորու ապահովելու աճող սերնդի բարոյական դաստիարակությունը' ձևավորելով մարդասիրության, հայրենասիրության, արժանապատվության բարձր հատկանիշներ: Բոլոր ժամանակներում էլ տարածված է եղել «Բարոյական դաստիարակություն» հասկացության որոշակի հակասական և ոչ միանշանակ ըմբռնում: Բացահայտելու համար այդ հասկացության էությունը այսօր, փորձենք այս հոդվածի շրջանակներում արդի մանկավարժուէթյան գիտության մեջ տարածված տեսությունների հիման վրա ներկայացնել որոշ վերլուծություններ: դըպրոցականների բարոյական դաստիարակությունը' բարոյական արժեքների հիման վրա կառուցված բազմաբնույթ գործունեության ընթացքում, ուսուցչի և աշակերտի նպատակաուղղված փոխներգործությունն է' անձի բարոյական հատկանիշների ձևավորման նպատակով:

Բարոյական դաստիարակության հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, որոնք փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ:

Թեմայի հետազոտության նպատակը: Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել բարոյական արժեքները և դրանց կարևորությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել բարոյական արժեքները, իսկ առարկան՝ բարոյական դաստիարակության կարևորության ուսումնասիրումը:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Բարոյական արժեքներ

Այսօր գիտության, կրթության և տեխնիկայի զարգացումը թելադրում է բարոյական արժեքների՝ գլոբալացման գործընթացին բնորոշ երանգավորում: «Գլոբալացումը պայմանավորված է ժամանակակից աշխարհի զարգացմամբ: Այն պետք է դիտարկել ոչ միայն որպես տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, կրթական, էկոլոգիական, այլ նաև միջազգային ինտեգրման գործընթաց, որի արդյունքում մարդկությունը դառնում է միասնական և փոխկապակցված»[1]:

Ժամանակակից գլոբալացումն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն է թողնում մարդու արժեհամակարգի վրա: Այսօր շատ արժեքային պատկերացումներ հիմնովին փոխվել են: Չնայած նրան, որ սոցիալ-մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծություններին: Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական արժեքներ, որոնք շատ հաճախ չեն համապատասխանում ազգային յուրահատկություններին, ինչն էլ խանգարում է ընտանեկան հարաբերությունների նորմալ ընթացքին, մասնավորապես՝ երեխայի դաստիարակությանը:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

«Բարոյական արժեք» ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով: Այլ կրոններ կամ պետական համակարգեր ևս ունեն բարոյական արժեքների մղող օրենքներ ու պատվերներ, սակայն քրիստոնեության բարոյական արժեքներն անհամեմատ վեր են մնացյալ բոլորից:

Բացի այդ, բարոյականության, առաքինության օրենքներ կարելի է շատ հաստատել, սակայն դրանց ամբողջական կատարման, ոչ միայն գործողության օրինակելիության, այլև մտքի ու սրտի մաքրությամբ իրագործելու համար մարդկային ներուժը բավարար չէ: Քրիստոնեությունը խոսում է աստվածային շնորհի մասին, որով մարդն իր կամքով, գործակից լինելով աստվածային նախախնամությանն ու զորակցությանը, կարողանում է ապրել բարոյական ու

[1] Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները՝ դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն, Եր., «Լույս », 1978, էջ 12

առաքինի կերպով, իսկ սայթաքելու դեպքում էլ մաքրվել ու սրբվել կատարված մեղանչումներից: Մինչդեռ միայն օրենքի հաստատումը այս շնորհն ու զորությունը չի տալիս մարդուն:

Սովորական օրենքների հետ համեմատությամբ՝ տասնաբանյա պատվիրանների առավելությունը երևում է հատկապես վերջին պատվիրանով, որը հրահանգում է չցանկանալ ուրիշի ունեցվածքը, կնոջը, ծառայողներին (Ելք 20.17): Պողոս առաքյալը, խոսելով այս պատվիրանի մասին, նշում է, որ ցանկության մեղավոր բնույթը ճանաչելի չէր լինի, եթե օրենքն ասած չլիներ՝ մի՛ ցանկացիր (Հռ. 7.7): Քրիստոնեությունը բարոյականության համար անհրաժեշտ արտաքին դրսևորումները փոխադրեց ներքին արտահայտման մեջ՝ մեղքը դիտարկելովմարդու հոգևոր ներաշխարհում: Դրա համար է, որ Քրիստոս բարկությունը կարծես համարժեք համարեց մարդասպանությանը, իսկ կնոջը ցանկությամբ նայելը՝ շնությանը (Մատթ. 5.21-22, 27-28):

Սուրբ Ներսես Շնորհալին «Հավատով խոստովանիմ» խորագրով իր քսանչորս աղոթքներից մեկում խնդրում է, որ Աստված իրեն զորություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ, չար խոսքեր: Քրիստոնեությունն անգամ լսելու և տեսնելու մեջ է դնումբարոյական սկզբունքներ՝ ի տարբերություն այլ օրենքների, որոնք ուշադրություն ենդարձնում միայն արտաքին արարքներին, արտաքին գործողություններին: Այսօր ոչ միայն մարդկանց հետ հաղորդակցության մեջ, այլև հաճախ համացանցից օգտվելիս, հեռուստացույց դիտելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև, որը շեշտել էր Ներսես Շնորհալին՝ անպարկեշտ, մեղսալի բաներ տեսնելու կամ լսելու վտանգը:

Պետք է զգոն լինել. առօրյայի, ներկա տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում գայթակղություններ, մեղսալի տեսարաններ են աչքի զարնվում, բայց այլ է դրանց հանկարծակի աչքի ընկնելը, և այլ է, երբ մարդը հավանություն է տալիս այդ պատկերներին ու տեսարաններին՝ դրանք մեղավոր հաճույքով դիտելով, ընդունելով և դրանով իսկ ընկնելով մեղքի մեջ:

Այսօր հասարակություն են ներթափանցել արժեքներ, որոնք խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, որ այն լինի բնականոն: Եթե փոփոխությունը տեղի է ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է արժեքային համակարգը: Նման իրավիճակում խիստ կարևորվում են ավանդական արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքը՝ որպես մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են և՛ հասարակությունը, և՛ պետությունը: Ընտանիքը սերտորեն կապված է պետության ու հասարակության զարգացման հետ և շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող դրական և բացասական փոփոխություններին: Սակայն միշտ չէ, որ ընտանիքը գտնվում է համապատասխանության մեջ տվյալ դարաշրջանի սոցիալ- տնտեսական իրականության հետ: Ընտանեկան ավանդույթների կիրառումը այսօր չափազանց կարևոր է ժամանակակից ընտանիքի բարոյական հատկանիշների ամրագրման և երիտասարդ սերնդի առողջ դաստիարակության տեսանկյունից:

Վերջին տարիներին երեխաների դաստիարակության գործում դպրոցին և ընտանիքին առանձնապես մեծ օգնություն են ցույց տալիս տարատեսակ արտադպրոցական ու արտադասարանական խմբակները, արվեստի և սպորտի մասնագիտացված դպրոցները, այդ թվում նաև՝ դաստիարակչական աշխատանքների կազմակերպման մի շարք կենտրոններ: Այդ նպատակով դպրոցը սերտ կապ է հաստատում հատկապես այնպիսի կառույցների հետ, որոնք իսկապես անում են ամեն ինչ երեխաների դաստիարակության շատ խնդիրների լուծման առումով:

Հասարակական կազմակերպություններն առավել ուշադրության են արժանացնում դպրոցից հետո դպրոցականների անխնամությունը հաղթահարելու ուղղությամբ: Ըստ անհրաժեշտության կազմակերպվում են արշավներ, ճանաչողական բնույթի բազմաբովանդակ էքսկուրսիաներ, բնակավայրի պատմամշակութային արժեքներին ծանոթություններ և այլ բնույթի հետաքրքիր միջոցառումներ:

Ընտանիքի հիմնական նպատակը մշակութային արժեքների փոխանցումն է, որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ընտանիքում է երեխան յուրացնում վարքագծային նորմեր, այստեղ է, որ իրականացվում է երեխայի սոցիալականացման առաջին փուլը, հարմարումը կյանքին:

Առաջին հերթին ընտանիքում են ձևավորվում և զարգանում անձի հետևյալ որակները՝ բարություն, հոգատարություն շրջապատի (մարդկանց, բնության, կենդանիների, հոգևոր արժեքների) նկատմամբ, ճշմարտախոսություն, խոսքի ու գործի համապատասխանություն, ազնվություն, պատասխանատվություն (գործի, մարդկանց, պարտականությունների), երախտագիտություն (ծնողի, հարազատի,

հայրենիքի նկատմամբ), նվիրվածություն և այլն: Ըստ Ղ. Աղայանի՝ բարոյական դաստիարակության ակունքն աշխատանքն է, որը նյութական և հոգեկան բոլոր հատկությունների աղբյուրն է: «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլորության»[2]: Հետևապես պետք է վաղ հասակից երեխային դաստիարակել աշխատանքային ավանդույթներով, նրան նախապատրաստել աշխատանքային գործունեության համար:

Աշխատանքային դաստիարակության ավանդույթների մասին Ղ. Աղայանի հիմնարար դրույթները մարմնավորվել են նրա «Մայրենի լեզվի» դպրոցական դասագրքերում, և այսօր էլ հայ անվանի մանկավարժի հայացքները մասին մեծապես նպաստում են հայեցի կրթության ու բարոյական դաստիարակության գործին: Ընտանիքում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով, վարքագծով, արժեքային կողմնորոշումներով:

Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողը: Ինչպես հայտնի է, երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դաստիարակության և սոցիալականացման գործընթացում: Ակնհայտ է, որ երկրորդի դեպքում արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում ավելի շատ տարերային կերպով. այն չի կրում կազմակերպված բնույթ:

Դժվար է ապացուցել, որ այդ գործընթացը կառավարելի դարձնելով՝ կարելի է հասնել դրական արդյունքի: Սովորողների գիտակցության և վարքագծի մեջ նոր արժեքների ներդրման գործընթացը խիստ հակասական է և կախված է մի շարք գործոններից՝ սոցիալական այն միջավայրի գաղափարախոսությունից, որտեղ դրանք տարածվում են, տնտեսական և սոցիալական զարգացման օբյեկտիվ գործընթացների բնույթից և այլն:

Ընտրելով դաստիարակության առումով հիմնարար արժեքները, գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ընտանիքը, դպրոցը հնարավորություն են ստանում դաստիարակության բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Այսպիսով՝ սովորողների հետ իրականացվող դաստիարակչական գործունեությունը նրանց համակողմանի զարգացման լայն հնարավորություններ է

[2] Ա. Մրտեյան, Ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում, 2019թ., էջ 185

ընձեռում: Մասնակից դարձնելով աշակերտների ծնողներին ու հասարակությանը՝ դպրոցում այն կարող է լուրջ ներդրում կատարել հոգեկան հարստությունը, բարոյական անաղարտությունն ու ֆիզիկական կատարելությունը իրենց մեջ ներդաշնակ կերպով զարգացնող նոր քաղաքացու ձևավորման գործում, որովհետև երեխաների ճիշտ դաստիարակությունից, դրանում ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի գործոնների մանկավարժորեն անթերի գործադրումից է կախված քաղքացիական հասարակության ապագան:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ:

Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:
- Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ: Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների դաստիարակչական ներուժով, դաստիարակող մեծահասակների մանկավարժական վարպետությամբ[3]:

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքում երեխան չափազանց զգայուն է ցանկացած

[3] Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: 298 էջ:

ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին[4]:

Արտաքին աշխարհի հանդեպ երեխայի դիրքորոշումն իրենից ներկայացնում է բարոյական զգացմունքների և պատկերացումների, բարոյական սովորությունների և վարքագծի ամբողջություն, որն ամփոփ ձևով կարելի է բնութագրել իբրև բարոյական կամ բարոյականության որակ: Փաստորեն, բարոյական որակը համալիր բարոյական հատկություն է, այն արդյունք է զարգացած բարոյական գիտակցության: Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորագույն հատկություններ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ և վեր են ածվում սոցիալական զգացմունքների:

Այդպիսի հատկություններից են, օրինակ, բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը: Աստիճանաբար երեխայի կողմից գիտակցվում և արժևորվում են նաև նշված զգացմունքներ, որոնք համալրում են նրա բարոյական որակը:

Բարոյական դաստիարակության երկու կողմերն էլ ենթադրում են մանկավարժի ակտիվ մասնակցություն և աջակցում: Մանկավարժը բարոյական դաստիարակության ընթացքում հանդես է գալիս «սոցիալական ուղեկցողի» դերում:

Բարոյական դաստիարակությունն իրականացվում է որոշակի միջոցներով: Նախադպրոցական տարիքում արդյունավետությամբ կիրառվում են գեղարվեստական միջոցները, որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը գեղագիտական շեշտադրումներով:

Գեղարվեստական միջոցներից հարկ է հատուկ առանձնացնել մանկական գեղարվեստական գրականությունը: Հեքիաթների հերոսների գործողությունները մեծ հուզականությամբ են ընկալվում երեխաների կողմից և խորը հետք թողնում նրանց բարոյական զգացմունքների և պատկերացումների վրա: Հեքիաթների հերոսական կերպարները ընդօրինակման արժանի բարոյական նմուշներ են: Բարոյական դաստիարակության ընթացքում անգնահատելի է բնության դերը, բնության հետ շփման ընթացքում ստացած դրական հուզական լիցքավորումը:

Բարոյական դաստիարակության միջոց է երեխայի ինքնուրույն գործունեությունը՝ խաղային, աշխատանքային, կերպարվեստային, կառուցողական

[4] Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն: Երևան: «Զանգակ-97»: 2008թ.: էջ161

և ուսումնական: Սակայն Մ. Ի. Լիսինան և Ա. Գ. Ռուզսկայան մանկան գործունեության ձևերից հատուկ նշանակություն են տալիս մեծահասակների հետ հաղորդակցմանը և ինքնուրույնությանը հասակակիցների հետ հարաբերվելու ընթացքում[5]:

Բարոյական վարքի սովորոյթների դաստիարակումը, այնպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքները յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգ: Իսկ դպրոցում երեխաների բարոյական գիտակցման ձևավորումն իրականացնելիս միշտ պետք է նկատի ունենալ, որ նրանք օժտված են վստահության բարձր աստիճանով:

Ուսուցչի խոսքը, նրա բացատրությունները, նրա բերած օրինակները, եզրակացությունները, որպես օրինաչափություն կասկածի ենթակա չեն: Ուստի ուսուցիչը տիրապետում է լուրջ հնարավորությունների, որոնց շնորհիվ աշակերտի մեջ ձևավորում է անհրաժեշտ վերաբերմունք՝ դեպի հասարակության բարոյական չափանիշը: Ուսուցիչը ձգտում է այն բանին, որ իր պահանջները դառնան բուն հանրույթի պահանջները: Հանրույթի պահանջները հասարակական կարծիքն է: Իր մեջ միացնելով կոլեկտիվի գնահատումները, դատողությունները, կամքը՝ հասարակական կարծիքը հանդես է գալիս որպես ակտիվ և ներգործող ուժ, որը հմուտ մանկավարժի ձեռքին դաստիարակության մեթոդի ֆունկցիա է կատարում:

Սոկրատեսի տեսական փիլիսոփայությունը հիմք և միջոց է գործնական փիլիսոփայության՝ բարոյագիտության ստեղծման համար: Նա բարոյականությունը կապում է բանականության հետ, իսկ առաքինությունը նույնացնում էգիտելիքի հետ: Ճշմարիտ բարոյականությունը գիտելիք է այն մասին, թե ինչ է բարիքը և օգտակարը մարդու համար, ինրն է օգնում նրան հասնելու երջանկության: Գիտելիքը նույնացնելով առաքինության հետ Սոկրատեսը կարծում էր, որ միայն գիտակցված, իմացության վրա խարսխված արարքը կարող է կոչվել բարոյական: Սա մի բան է, երբ մարդը բարիք է գործում անգիտակցաբար, և մի այլ բան երբ դա անում է գիտակցաբար:

Բարոյականությունը պատմական երևույթ է: Ծագելով մարդկային հասարակության ձևավորման վաղ աստիճանում՝ այն զարգանում է տնտեսական և այլ հարաբերությունների փոփոխման, մարդկության նյութական ու հոգևոր

[5] Лисина М. И. Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: Модэк. 1997. с.48

կուլտուրայի առաջադիմության ընթացքում: Համամարդկային տարրերի հետ միասին բարոյականության մեջ մտնում են պատմականորեն անցողիկ և դասակարգային նորմաներ, սկզբունքներ, իդեալներ: Դեռահաս տարիքի հոգեկան զարգացման կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ ժամանակ տեղի են ունենում բարոյական գիտակցության աճ՝ մարդը ձևավորվում է որպես անհատ: Գիտելիքները վերածվում են համոզմունքների, ձևավորվում են աշխարհայցքը և մարդկանց նկատմամբ վերաբերմունքի համակարգ:

Դեռահասները ձգտում են դատել ինքնուրույն, ամեն ինչի մասին ունենալ իր սեփական դատողությունները, անել ընդհանրացումներ և եզրակացություններ, սեփական գնահատական տալ տեղի ունեցող իրադարձություններին և երևույթներին: Ընտանեկան ջերմ մթնոլորտում երեխաները հաղորդակից են դարձնում մեծերին իրենց մտքերին, ապրումներին և սպասում են նրանցից պատասխան հուզող հարցերի առթիվ:

Ծնողները պետք է հանգիստ և առանց ձանձրանալուուղղություն տան երեխաների մտքերին: Ըստ այդմ անհրաժեշտ է հատուկ պահանջկոտությամբ վերաբերվել սեփական անձին, խոսքերին և ամենակարևորն է՝ արարքներին, քանի որ նրանք դյուրազգաց են մեծերի վարքի մանրամասների նկատմամբ: Ընտանիքը մեծ դեր է խաղում դեռահասի բարոյական նկարագրի ձևավորման գործում: Ծրջապատի, գործի նկատմամբ վերաբերմունքի բնույթը բարոյական նորմաների և սովորույթների համակարգը ձևավորվում են ամենից առաջ ընտանիքում և կախված են ընտանեկան հարաբերությունների հետ:

Ընտանիքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել դեռահասի սկզբունքայնության և պատասխանատվության, բարձր գիտակցականության և իր արարքների հետևանքները նախատեսելու կարողության դաստիարակությանը, քանի որ հենց դրա հետ է անխզելիորեն կապված կյանքում համոզմունքների և բարձր բարոյականության ձևավորումը: Ունենալով այդ հատկությունները նա կարողանում է խուսափել վատ ազդեցություններից: Հնարավոր չէ և հարկավոր էլ չէ արհեստականորեն հետ պահել նրանց պրոբլեմներից և դժվարություններից, որոնց հետ նրանք կարող են բախվել:[6]

Անհրաժեշտ է նրանց դաստիարակել այնպես, որ նրանք բարոյապես կայուն լինեն, կարողանան դիմադրել ոչ միայն վնասակար ազդեցություններին, այլև հակահարված տալ դրանց: Դառնալով ավելի ինքնուրույն, նրանք սկսում են ավելի քննադատաբար վերաբերվել մեծերին: Նրանք արդեն կուրորեն չեն հավատում ամեն

[6] Վ.Բաղրամյան < Առաքինի և ուսյալ հերոսը > 1993թ

ինչի: Նրանք սպասում են իրենց առաջադրած յուրաքանչյուր պահանջի լուրջ հիմնավորում:

Ուստի, եթե մենք ցանկանում ենք նրանց մեջ դաստիարակել բարոյական վարքի ունակություններ, չպետք է խախտենք մեր իսկ պահանջների տրամաբանությունը: Բարոյական գիտակցության ձևավորումը անքակտելիորեն կապված է ինքնագիտակցության ձևավորման հետ: Դեռահասի մեջ արդեն առաջանում է իրեն՝ որպես անձնավորություն հասկանալու պահանջը: Նրա համար առօրեական է դառնում ,,ինչ մարդ եմ ես,, հարցը: Այդ տարիքի երեխաները ուշադիր զննում են իրենց շրջապատողներին՝ խորհելով մարդկանց արարքների և հատկությունների մասին, նրանք սովորում են քննադատորեն մոտենալ իրենց: Մենք պետք է օգնենք նրանց հասկանալու իրենց զգացմունքները, ճիշտ գնահատելուիրենց հնարավորությունները, ընդունակությունները, բնավորությունը: Նրանք մարդկանց մեջ բարձր են գնահատում նրբազգացությունը, զսպվածությունը, նրանցհամար մեծ նշանակություն ունեն հարգանքը, վստահությունը, ընկերությունը: Նրանց դուր են գալիս համեստ, հասարակ վարվելակերպով մարդիկ: Եվ հենց այդ հատկություններն են սկսում իրենց մեջ ձևավորել դեռահասները: Մարդկության դարավոր երազանքը միշտ էլ եղել և մնում է այնպիսի անձի դաստիարակությունը, ովկարող է արժևորել անցյալի բարոյական արժեքները և ինքնիրացնել այն:

Բարոյական դաստիարակության նպատակը Ռուսոն համարում էր մարդասիրությունը՝ որն իր մեջ ընդգրկում է ճանաչել մարդուն, հետաքրքրվել նրա վիճակով ու կարիքներով, լինել բարեգործ, ձերբազատվել նախանձից, ատելությունից, վրեժխնդրությունից, լինել վեհանձն ու անհիշաչար, զուսպ ու համեստ, բայց և համարձակ՝ բարիք անելու և քաջասիրտ՝ ճշմարտություն ասելու մեջ: Բարոյական դաստիարակության կենսագործման համար կարևոր դեր են կատարում ուսումնադաստիարակչական գործընթացը, բոլոր առարկաներ և արտաուսումնական միջոցառումներ: [7]

Բարոյական դաստիարակության արդյունավետության համար դպրոցներում առաջնային տեղ է հատկացվում ազգային և բարոյական արժեքների գնահատմանը: ՀՀ անկախության ժամանակաշրջանում, երբ տեղի ունեցան լայնամաշտաբ փոփոխություններ, ինչպես սոցիալ տնտեսական, այնպես էլ կրթականհամակարգում նորովի վերագնահատվեցինազգային անհատականությունները դեպքերն ու դեմքերը: Կարևոր փոփոխություններ կատարվեցին անձի բարոյական դաստիարակության արժեհամակարգում, որի մոդելին համարժեք

[7] Ժան Ժակ Ռուսո < Էմիլ կամ դաստիարակության մասին >: Հատոր I և II

դաստիարակությունը պետք է ապահովի ազգային արժեքների արժևորումից դեպի համամարդկային արժեքների արժևորում:

Ժամանակակից դպրոցական համակարգում կարևորվում է բարոյական դաստիարակությունը որպես մարդու դաստիարակության միջուկ: Բարոյական դաստիարակության կառուցվածքներն են՝

-Բարոյական հարաբերություններ կամ կուլտուրական վարքի կանոններ

-Ավանդույթներ և սովորույթներ

-Բարոյական հայացքներ

-Վարքի նորմեր և սկզբունքներ

Բարոյական դաստիարակության կատեգորիաներն են՝

-Բարոյական գիտակցություն

-Բարոյական գործունեություն

-Բարոյական հարաբերություններ

-Բարոյական վարքագիծ

Բարոյական դաստիարակության բնագավառներն են՝

- Սեռական դաստիարակություն
- Իրավական դաստիարակություն
- Գեղագիտական դաստիարակություն:

Իհարկե այս տեսակետից նորից անդրադարձ կատարենք Ռուսոյի հայացքներին, երբ սանի համար օգտագործում էր մարդ-բնություն, մարդ-մարդ կապի դրսևորումները, և ճիշտ բարոյական մշակույթ էր ձևավորվում բնության և մարդու միջև, լուծում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին ուսման նկատմամբ հետաքրքրություն և սովորելու ցանկություն, բարոյական արժեքներն են ձևավորվում, որոնք իմաստավորում են մարդու կյանքը: Դասերի ժամանակ բերելով օրինակներ նշում ենք, որ անձի մասին դատում ենք նրա արժեքներով, որոնք գոյացնում են նրա ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում են նրա կեցության հիմքը և բնականոն գոյության ու ախափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցությանը:

Յուրաքանչյուր մարդ ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի հանրության մեջ բնականոն գործելու համար: Առանձնահատուկ տեղ պետք է հատկացնենք աշակերտների մոտ արժեք-արժանիք հատկանիշի ձևավորմանը, որը շատ կարևոր է անհատ-ազգ փոխհարաբերությունների կարգավորման համար: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես

հաստատակամություն, աշխատասիրություն, համբերատարություն և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացությունը, որում առանձնանում է ազգային- պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն: Այս թեման ես չափից շատ եմ կարևորում և ամեն հարմար առիթի դեպքում դարձնում աշակերտների համար քննարկման նյութ, իհարկե այն դեպքում երբ աշակերներին արդեն բացատրած եմ լինում: Նշեմ նաև, որ նրանք նույնպես մեծ սիրով են մասնակցում: Սկզբից խոսում ենք արժանապատվության մասին, ներկայացնում որ դա սեփական ,,Ես,, ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է,անձի ինքնագնահատականը: Անդրադառնալով ազգային արժանապատվությանը ներկայացնում եմ,որ դա սեձական ազգի արժանիքների,վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ: Այնուհետև խոսում ենք արդարամտության մասին, որը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: [8]

Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են: Բարոյական դաստիարակության լավագույն միջոցներից մեկը Ռուսոն համարում էր բարոյական վարժությունը: Նա արդարացիորեն նշում է, որ առաքինի գործերը սեր են առաջացնում դեպի մարդկությունը: Բարոյական որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում երեք կարևոր հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ: Այս հատկանիշները օգնում են կառուցել արժևորված հարաբերությունների համակար՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

Նպատակը մասնատվում է խնդիրների, որոնք թույլ են տալիս կառուցել դաստիարակության ռազմավարությունը և ապահովել նրա արդյունավետությունը: Պատմական տարբեր փուլերում դաստիարակության նպատակները եղել են տարբեր: Նրանք չպետք է դրված լինեն ձևականորեն, բայց նաև չպետք է դառնան բաձարձակ, այն պետք է հաշվարկված լինի:

[8] Ժան Ժակ Ռուսո < Էմիլ կամ դաստիարակության մասին >: Հատոր I և II

Պատմության ուսուցիչները դասերի ընթացքում պետք է պայմաններ ստեղծեն աշակերտի անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար, հնարավորություն տալ նրան ներկայացնելու իր մտածածը և գաղափարները մի խոսքով չվախենա արտահայտվելուց կամ թեկուզ սխալ միտք ներկայացնելուց: Եթե մարդը չի ճանաչում իր պատմությունը, չի գնահատում իր մշակութային արժեքները, չի կարող լինել տվյալ ազգի, տվյալ հասարակության մեջ գործող բարոյական նորմերի կրողը, չի կարող իրականացնել նրա սոցիականացման գործընթացը:

Եզրակացություն

Այսօր դաստիարակչական աշխատանքի միջուկը համարվում է հոգևոր-բարոյական դաստիարակությունը: Հոգևոր-բարոյական զարգացումը սոցիալականացման գործընթացում անձի արժեքային-իմաստային ոլորտի հետևողականորեն ընթացող ընդլայնումն է և ամրակայումը, մարդու ընդունակության ձևավորումը՝ գնահատել և գիտակցորեն կանգնել ավանդական բարոյական նորմերի և բարոյական հիմքի վրա ինան իր, ուրիշ մարդկանց, հասարակության, պետության, հայրենիքի, աշխարհի հանդեպ վերաբերմունքում և հարաբերություններում: Մեզանից յուրաքանչյուրի նպատակն է բանիմաց, ստեղծագործ, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը:

Բարոյական դաստիարակության բովանդակությունը, բարոյական զգացմունքները քարացած չեն, փոխվում են հասարակական կարգերի փոփոխության հետ: Յուրաքանչյուր նոր սերունդ գոյություն ունեցող նյութական և հոգևոր արժեքների բնական ժառանգորդն է և նրան է վստահված կյանքը կատարելագործելու առաքելությունը: Յուրաքանչյուր սերունդ ունի իր պատմական խնդիրները և դրանք բարոյական բարձր մակարդակով լուծելու պարտականությունը:

Եվ, ի վերջո, բարոյականության հզոր միջոց է երեխային շրջապատող մթնոլորտը, այն սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում և մեծանում է: Սիրո և փոխադարձ հարգանքի հիմունքներով կառուցված բարյացակամ մթնոլորտը, ընկերական փոխվստահելի հարաբերությունները խթանում են բարոյական դաստիարակության գործընթացը և նպաստում սոցիալական զգացմունքների զարգացմանը: Այսպիսով, բարոյական որակների ձևավորման ընթացքում երեխան ձեռք է բերում երեք կարևորագույն հատկանիշ՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհի նկատմամբ և բարոյական վարքագիծ: Նշված հատկանիշներն օգնում են կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով՝ ուղղված սոցիալական զգացմունքների ձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Մրտեյան, Ազգային ավանդույթների, արժեքների և ընտանիքի դերը սովորողների դաստիարակության գործում, 2019թ., էջ 185
2. Թոփուզյան Ա. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ: Երևան: «Լինգվա»: 2009թ.: 298 էջ:
3. Ժան Ժակ Ռուսո < Էմիլ կամ դաստիարակության մասին >: Հատոր I և II
4. Ղարիբջանյան Օ. Բ., Ժողովրդական ավանդույթները՝ դպրոցականների բարոյական դաստիարակության գործոն, Եր., «Լույս », 1978, էջ 12
5. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն: Երևան: «Զանգակ-97»: 2008թ.: էջ161
6. Վ.Բաղրամյան < Առաքինի և ուսյալ հերոսը > 1993թ
7. Лисина М. И. Обшение, личность и психика ребенка. Под редакцией Рузской А. Г. М.: Институт практической психологи. Воронеж: Модэк. 1997. с.48